


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՍԱ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ**

Ախ, սա մեր երիտասարդները: Այս խօսքն է որ յաճախ կը լսուի ծնողներու բերնէն, որոնք ընդհանրապէս կը գանգատին նոր սերունդի մասին: Նորի և հինի խնդիրն է այս, որ միշտ զբաղեցուցեր է մարդերը, իբր այժմեական էն հրատապ հարցերէն մէկը: Պէտք է այսնկատի առնուի ծնողաց և զաւակներու տեսակէտներէն: Այս անգամ երիտասարդութեան հանդէպ միայն մեր դիրքին մասին կէտ մը յիշելով կ'ուզենք բաւականանալ:

Պէտք է անվերապահօրէն ընդունիլ թէ մեր ընկերային կեանքին պատուաւորութեամբ ռամկավարական սկզբունքները ու ազատատենչ ձգտումները՝ ծնողներու և զաւակներու փոխյարաբերութիւններուն և նոր սերունդի կըրթութեան հարցին շատ բարդ հանգամանք մը տուած են: Շատերը արդի երիտասարդութեան մէջ ընկերային սովորութիւններու, կրօնաբարոյական հին ըմբռնումներու դէմ ըմբոստացում մը կը նշմարեն: Հետեւաբար նոր սերունդը կրօնքին հանդէպ անտարբեր, ընկերային կարգերու հանդէպ արհամարհոտ, բարոյապէս անգոհացուցիչ կը դտնեն: Չենք ուզեր այս դիտողութիւնը խորհրդածութեան առարկայ ընել հիմա: Բայց պէտք է համարձակութեամբ ըսել թէ այս երկուքին փոխյարաբերութիւնները իրապաշտ դետնի մը վերայ պէտք է դրուին երիտասարդին յուզումները, ձգտումները, հոգեկան վիճակը նկատի

առնելով: Երիտասարդի մէջ պատուաւորութիւնը շատ զօրաւոր է. այդ եռուզեռ հոգին, թարմ ոյժերու այդ անսպառ գանձը խոր գիտակցութիւն մ'ունի իր իրական կամ կարծեցեալ արժանիքին մասին: Երիտասարդը կը փափաքի որ դրսիններն ալ իր այդ արժանիքը գնահատեն: Բայց անոր փափաքները և գաղափարները արհամարհոտ ժեպով մը աննկատ թողուլ, իրերը այնպէս ձեւել չափել իբր թէ ան մեքենայ մը եղած ըլլար՝ երիտասարդին վրայ կործանարար ազդեցութիւն մը կը թողու: Ան կամ կը բարոյալքուի և անհատականութենէ կը զրկուի, և կամ կ'ընդգրգի իրեն պարտադրուած պահանջներուն դէմ: Պէտք է՝ եթէ մեր փափաքն է երիտասարդները զարգացնել՝ գործակցութեան հրաւիրել զայն իր կարողութեան համեմատ պատասխանատուութեան բաժին մը տալով գործերը վարելու մէջ: Գործակցութիւնը պէտք է ըսելով շատ կանուխէն, առաջնորդելով զայն մինչեւ որ ան կարենայ արժանի յաջող մը գառնալ: Եւ եթէ ներկայ երիտասարդութիւնը իրապէս անկումի յայտնի նշաններ կը ցուցնէ, պէտք է մեր գանգատները և քննադատի սլաքները ուղղել զայն արտադրող միջավայրի պայմաններուն, զայն կերակրող մէջ մեծ բաժին ունեցող նախկին սերունդին: Դադրի՛նք պարտաւելէ երիտասարդութիւնը, յարգի՛նք զայն, կարեկցի՛նք անոր իր սալթաքումներուն մէջ, և այն պիտի բարձրանայ, օգտակար և շինիչ ազդակ մը դառնալով հասարակական կեանքի մէջ: Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

ԿՐՕՆՔԸ ԿՊԻՍՈՒՅՈՒԻ

Կրօնքը թէ բարի և թէ չար կըլլայ: Անոր բարի կամ չար ըլլալը կրօնականէն և մարդոց ապրելակերպէն կախեալ է: Կրօնքը չի կրնար կեանքէն բաժնուիլ ինչպէս սիրտը՝ թոքերէն: Կրօնք և կեանք թէև հոմանիշ չեն իրարու և սակայն իրարու հետ այնքան ուրաւորէն կապուած են որքան միսը ոսկորին: Առանց մէկուն միւսը գոյութիւն չի կրնար ունենալ: Ինչպէս որ մարդ առանց ողնայարի կանգուն չի կրնար կենալ, այնպէս կեանքը առանց կրօնքի չի կրնար կարծուածին չափ արդիւնաբեր ըլլալ: Կրօնքը կեանքին ողնայարն է: Անով է որ մարդկութիւնը զոյ է, կ'ապրի և զէպի բարձրելոյն հասնելու կը ձգտի: Ան է որ մարդս կըմէ գէպի բարին, գեղեցիկը, և ճշմարիտը: Կրօնքը կեանքին անբաժան ընկերն է և փոխադարձաբար:

Հետեւաբար կրօնքը կ'ուսուցո՞ւի: Անգլիերէն առածը կըսէ, «նկարագրը ոչ թէ կ'ուսուցուի այլ կը փոխանցուի»: Նոյնպէս կըրնանք ըսել թէ կրօնքը փոխանցիկ է քան թէ ուսանելի, որքան ալ ան պարունակէ իր մէջ ուսուցում, ծանօթութիւն և փիլիսոփայութիւն:

Օրինակ, ծնողք մը ուզէ չուզէ կը փոխանցէ իր զաւակներուն իր կեանքն ու նկարագիրը, լաւ կամ յոռի: Ուսուցիչ մը իր բարի կամ չար ազդեցութիւնը կը գրոշմէ իր աշակերտներուն՝ կամայ ապամայ: Կղերական մը իր բարձր կամ ցած սկզբունքը, խեղճները ու ապրելակերպը կը փոխանցէ իր ժողովուրդին: Տղաքը, աշակերտներ և ժողովուրդը միշտ իրենց աչքերը չորս բացած՝ կը սեւեռեն ծնողքներուն, ուսուցիչներուն և կղերականներուն կեանքին, ապրելակերպին, նկարագրին և անձնաւորութեան վրայ, քան թէ անոնց գիտութեան, փիլիսոփայութեան և ծանօթութիւններուն վրայ: Նախկինները փոխանցիկ են, իսկ յետինները ուսանելիք:

Սակայն շատ անգամ ծնողքներ, ուսուցիչներ և կղերականներ իրենց զաւակներուն, աշակերտներուն և ժողովուրդին կը յանձնարարեն և նոյն իսկ կ'ստիպեն որ վերջինները ընեն ինչ որ առաջինները կ'ըսեն և ոչ թէ յետինները ըսեն ինչ որ նախկինները

կ'ընեն: Անոնք իրենց պարտաւորութեանց մէջ թերի գտնուելով հանգերձ կ'ուզեն որ երիտասարդներն ու ժողովուրդը պարտազանց չըլլան: Այս սկզբունքը քրիստոնէական չէ: Ասիկա Քրիստոսի սկզբունքին հակապատկերն է: Այդ ընթացքը Քրիստոնէական ընթացքին հետ հակոտնեայ է: Քրիստոս ապրեցաւ ինչ որ քարոյցեց եւ սորվեցուց: Քրիստոս նախ սիրեց եւ յետոյ «Սիրեցէք զիրար» ըսաւ: «Այս է իմ պատուէր» որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի»: Դարձեալ, խոնարհ եղէք, ինչպէս ես հեզ և սրտով խոնարհ եմ: Սպասաւոր եւ ծառայ եղէք, ինչպէս «Որդին մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու»: Յիսուս իր կեանքովը եւ ոչ թէ իր խօսքերովը յայտարերեց իրական եւ կենսական կրօնքը: Ան իր անեղծ, անարատ եւ անբասիր նկարագիրը եւ անձնաւորութեամբը փոխանակեց իր աշակերտներուն, որոնք՝ իրենց կարգին աշխատեցան նոյն շաւղէն ընթանալ եւ շատերը երկնից Թագաւորութեան բերել:

Յիսուս յայտնեց թէ Աստուած մեր երկնաւոր հայրն է և մարդիկը անոր որդիները ըլլալու արժանի: Աստուած իր անհուն հայրական սէրը յայտնեց մարդկութեան Յէսուսի միջոցաւ: Ասոր համար Յովհաննէս Առաքեալ կը գրէ. «Այս բանին մէջ է սէրը, որ ոչ թէ մենք սիրեցինք զԱստուած հապա որ Ասիկա մեզ սիրեց, ու իր Որդին զրկեց մեր մեղքերուն քաւութիւն ըլլալու:»

Պօղոս առաքեալ ալ կըգրէ, «Աստուծ իր սէրը զոր մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ գեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ:» «Աստուած այնպէս սիրեց աշխարհը որ իր միածին Որդին տուաւ և ով որ անոր հաւատայ յաւիտենական կեանք ունենայ:»

Եւ ահա Քրիստոսի այս վսեմագոյն կեանքը և անհուն ու անշահախնդիր սէրն է որ կը փոխանցուի անոնց՝ որոնք զայն կընդունին և կը զաւանին իրենց Տէրն ու Փրկիչը և Արքան: Քրիստոս իր կրօնքը սիրոյ մէջ հաստատեց՝ սէր հանդէպ Աստուծոյ և մարդոց՝ և նոյն ապրուած սիրոյ կեանքին համար խաչուեցաւ: Մեր մեղքերուն համար զուհուեցաւ, ժպէտով մենք անոր վէրքերովը բժշկուեինք: Պաշեալ Քրիստոսը միանգամ

մայն յարեալ Բրիտոս եղաւ:

Կէօթէ ըսած է. «Բարձրագոյնը չի կրնար խօսուիլ», և այս խօսքը Հիպոքր ճըրճը խմբագիր Լ. Բ. Կեֆիսի գրչին տակ կը վերածուի «Բարձրագոյնը չի կրնար խօսուիլ բայց ի դորձ կրնայ գրուիլ»: Աստուած Սէր է յայտնուած Բրիտոսով: Եւ այն սէրը կրնայ ի դորձ գրուիլ ապրելակերպով և կեանքով: «Ոչ թէ խօսքով և լեզուով սիրենք, և ապա գործով և ճշմարտութիւնով:»

Հետեւաբար գիմելու ենք Յիսուսի և Անկէ ներշնչուած, Անոր կրօնքն ու կեանքը մեզի փոխանցուած պէտք է նետուինք ապարէզ, մեր մնացորդ բնկորները փրկելու բարոյական անկումէ, հոգեւոր սնանկութենէ ընկերային չարիքներէ, ընտանեկան պղծութիւններէ և տնտեսական զեղծումներէ:

Ճարապուս

Յ. ԿԻՒՐԼԷՔԵԱՆ

ՀԱԼԷՊԻ ՀԱՅ. ԱՒԵՏ. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1. Սկզբնաւորութեան շրջան:

Այս եկեղեցիի հին արձանագրութիւնները մեր ձեռքը չեն. այրուած են: Տեղեակ անձնաւորութիւններու վկայութեանց համեմատ 1850ի տառնները, Կիլիկիոյ Այնթապ քաղաքին մէջ Ամերիկեան Պօրտ Ընկերութեան Միսիօնարներու միջոցաւ սկսուած Աւետարանչական գործը հոգեւոր արթնութիւն և գէպի եկեղեցական բարեկարգութիւն մեծ հոսանք մը յառաջ բերած էր: Այս հոգեւոր շարժումէն ազդուող վաճառականներ և արհեստաւորներ անպաշտօն կերպով և Սբ. Աւետարանը ժողովուրդին հասկցած լեզուով քարոզելու նպատակաւ Մարաշ, Բիլիս և այլ տեղեր կ'այցելէին: Եւ Մաքքան Նազար անուն Այնթապցի մը, որուն ծեր կիներ, և զաւակներէն մին տակաւին ողջ են, 1853ին Հալէպ կուգայ հոգեւոր կենաց մասին վկայելու և Աստուծոյ խօսքը քարոզելու:

Յիշեալը իբրեւ արհեստաւոր մը՝ անպաշտօն և անշնչակ կերպով Աստուծոյ խօսքը քարոզելու մէջ չի թերանար: Ծառ չանցած քանի մը Հայեր անոր շուրջը կը բոլորուին, Աւետարանը իրենց հասկցած լեզուով քննելու և աղօթելու համար:

Այս միջոցին Ամերիկեան Պօրտի միսիօնարներէն Տր. Նըթինկ՝ Հալէպի մէջ սկսած

հոգեւոր գործին մասին լսելով՝ Այնթապէն Հալէպ կուգայ, և Մաքքան Նազարին կը միանայ: և Մուղարպէլիյէ փողոցին մէջ այժմ Պէյթ. . . անունը կրող տունը իբրեւ հաւաքատեղի վարձելով, Աւետարանի քարոզութեան պաշտօնապէս կը ձեռնարկեն:

Այստեղ հինգ տարի և վեց ամիս և Կասթէլ Մուշի թաղին մէջ մի քանի ամիս պաշտամունքներ ընելէ յետոյ, Տր. Նըթինկ Կապանի Պապարի մօտ, Կասթէլ Ճուրա փողոցին մէջ, «Հառու պէյթ մասլուլթա» կոչուած տունը ծախու կ'առնէ և քիչ չափով փոխելով աղօթարանի կը վերածէ, որ մօտաւորապէս վաթսուն տարի այդ նպատակով ծառայած է Հալէպի Հայ Աւետ. համայնքին:

2. Հալիպի Հայ Աւետ. եկեղեցիի առաջին կարգակերպութիւնը:

Տր. Նըթինկ համոզուելով թէ Սուրբ խօսքին քարոզութեան յարատեւող անձերէն ու մանք միտքով, սիրտով և բարի կեանքով պատրաստ են Տէրոջ և իրարու հետ հաղորդակցելու, 1855ին եկեղեցիի անդամակցութեան կ'ընդունի զանոնք և առաջին Սուրբ Հաղորդութեան խորհուրդը կը կատարէ: Այն անձերն են հետեւեալները 1. Ճան. . . անուն մէկը, (2) Զրպուզճի Աստուր, (3) Կարապետ Էքմէքճեան, (4) Թէրզի Կիրակոս, (5) Տէօքմէճի Թորոս, (6) Յակոբ Յակոբեան, (7) Զօրպաճի, Սարգիս Էմլէքեան, (8) Պրէզաճի Աստուր Էմմի, (9) Տիկին խաթուն Սահակօֆ: Եւ առաջին Սուրբ պսակը կատարուեցաւ ախկնկան Ռուսահպատակ Յակոբ Սահակօֆի հետ ամուսնութեամբ:

[Շարունակելի]

ՎԱՂՈՒԱՆ ԳԻՒՏԵՐԸ

Բօճէր Ու Պէպսըն միջազգային ծանօթ վիճակագիր կը նախատեսէ թէ յաջորդ յիսնամեակի մէջ աւելի հրաշալի գիւտեր պիտի կատարուին քան պատմութեան սեւէ մէկ շրջանին մէջ:

Ան կը հաւատայ թէ ներկայ դարուս ամենամեծ յառաջացումը օդադնացութեան գիտութեան մէջ է: Ան կը գուշակէ թէ՛ կերպ մը պիտի գտնուի օդանաւային կառաւորների (թրէն) կազմելու, հետեւաբար քաղաքներու միջև ու Անգլանդեանի վրայէն օդային երթեւեկութիւն պիտի հաստատուի շոգիկաւ:

քէն աւելի ապահով աւելի աժան եւ արագ: Մեքենագիտութիւնը այնչափ պիտի յառաջանայ որ կարելի պիտի ըլլայ տան բակէն օդը ելլել եւ գիւրութեամբ իջնել իր գործատեղիին տանիքը:

Բայց հոս չ'կենար ան կը գուշակէ աւելի հիւսիսեցիկ գիւտեր, ան կ'ըսէ թէ ապագային լոկոր տուները պիտի շինուին ռետինէ եւ պաղ լոյսով պիտի լուսաւորուին զոր կայծօռիկն ու կարգ մը ձեւեր ունին:

Չմեռը անոնք պիտի տաքնան եւ ամառը պիտի զովանան հիւլէական ոյժով եւ կամ ուրիշ աժան ոյժով մը, որ պիտի առնուի արեւէն, մականթացութենէն եւ կամ երկրիս կեղբոնէն:

Պէպտնի կարծիքին համեմատ, յիսուն տարի ետքը կաթի շիշերը, ներկայ սառի մեքենաները, հանքածուխի թիւերը, եւ ուրիշ շատ մը այսօր գործածուող գործիքները թանգարանի առարկաներ պիտի ըլլան: Եւ մեր կաթն ու կարագը ֆեոգիկն (հեղուկ կաղ մը որ ամուսնէ, քարիւղէ կ'արտադրուի), պիտի հանուին փոխանակ կովերէ հանուելու: Մինչդեռ մեր շատ մը կերակուրները խտացեալ կերպով կամ զեղահատի ձեւով պիտի ծախուին:

Այն ատեն փայտը, կըսէ ինքը, բուրդէ ու բամպակէ աւելի պիտի գործածուի հագուստեղենի համար. փայտէ հագուստներու անձրեւէն իրենց ձեւը կորսնցնելու վտանգը պոյութիւն պիտի չունենայ, քանզի օդերեւութաբանները պիտի կարենան երկու երեք շարաթ առաջ գուշակել օդի փոփոխութիւնները ու արգիլել անձրեւն ու տեղատարափը միայն կոճակի մը վրայ ճնշելով:

Պաղ լոյսը ներկայ տնտեսագիտական ամենամեծ պէտքն է: Այս մինչեւ հիմայ եղած խուզարկութեանց էն արմատականն է, ան ներկայիս լուրջ ուշադրութեան արժանացած է եւ այս մասին անցեալ տարի կալուոր ու խոստմնալից փորձեր կատարուած են: Այսօր երկտրականութեան միայն 100 էն 5ը կը գործածուի լուսաւորութեան համար, իսկ մնացեալ 100էն 95ը կը վատնուի անօգուտ տաքութիւն արտադրելու: Բայց երբ պաղ լոյս մը գտնուի նոյն գինով մեր ներկայ գործածածէն քսան անգամ աւելի լոյս պիտի ստանանք:

Գալով նոր ուժի աղբիւրներուն արդէն իտալիոյ մէջ գործարան մը երկրիս ներսէն տնտեսած ուժով կը գործէ, որ իբր շոգի դուրս կուգայ: Գիտութիւնը նաեւ յաջողած է շահագործելու մականթացութեան ուժէն մաս մը եւ միշտ կերպեր կը խորհի օգտագործելու Արեւին տաքութիւնը եւ երկրիս իր առանձնիքին վրայ դառնալէն յառաջ եկած ուժը:

Այս աղբիւրներէն ոմանք պիտի օգտագործուին յաջորդ յիսուն տարիներու ընթացքին, բայց անոնք պիտի անշքանան բաւական չինելու կամ հիւլէական ուժը գործածելու կերպին գիւտին քով զայս հնարող անձը հիմնովին պիտի յեղափոխէ ներկայ ճարտարաբուեստը:

Մի քանի տարիներէ իվեր մեծ գիտնականներ կ'ուսումնասիրէին հիւլէին կաղմուածքը եւ երբ գտնեն զաղտնիքը այն մեծ ոյժը գործածելու որ կը հաւատան թէ ներփակուած է անոր մէջ, ընտանիքի տէրէրը թող չմտահոգուին ձմեռուայ ամուսինն համար. քանզի փոխանակ ամուսին մի քանի կաթիլ ջուրէ առնուած հիւլէական ոյժը գործածելով շարաթ մը պիտի տաքցնեն սենեակը:

Սակայն գործնականին մէջ թէրիւս ասոր ալ պէտք պիտի չունենան. քանզի ոյժը ա'յնքան զիւրին եւ աժան կերպով արտադրել կարելի պիտի ըլլայ, որ հիւլէական ոյժի հաստատութիւններէն ոեւէ մէկուն ձրիօրէն ոյժի հոսանքներ պիտի զրկուին ներկայ անթել հեռագրի մէթոտով:

Ոյժի աժան աղբիւրները գտնելէ յետոյ շատ չանցած, մեծ շէնքերը պիտի կառուցուին առանց պատուհանի, բայց անոնց լուսաւորութիւնը, օգասութիւնն ու տաքութիւնը ներկայ տուններէն աւելի լաւ պիտի ըլլան:

Ակնարկելով ռետինի նոր աղբիւրներուն եւ զայն մի քանի տարիներու բաղադրութեամբ արտադրելու փորձին՝ Պէպտնի կ'ըսէ թէ հետեւեալ 50 տարիներու ընթացքին ան պիտի գործածուի ճամբաներու, տախտակամածի եւ տուններու շինութեան համար:

Արդէն ճկուն ապակի ունինք, կ'ըսէ ինք, բայց ան տեղի պիտի տայ անբեկանելի ապակիին: Պիտի շինուին մետաղի խառնուրդներ որոնք երբէք պիտի չժանգոտին, ու քի-

միական բաղադրութիւններ՝ որ փայտը փտ-
տելէ պիտի արգիլին: Մօտիկ ապագային
եկեղորական կառքերը լոկ ստորերկրեայ
փոխադրութեանց համար պիտի գործածու-
ին:

Օգանաւը ներկայ ամենամեծ գիտական
յառաջացումը նկատելով հանդերձ, այն գեռ
փորձարկութեան շրջանին մէջ է: Ձայն կա-
տարելագործելու եւ ժողովուրդին ապահո-
վութիւն ներշնչելու միակ կերպը, ըստ Պէպ-
սընի, շոգեկառքի զրութիւնը գործածել է:
Երբ հինգ կամ վեց օգանաւեր իրարու կապ-
ուած ըլլան, 20-30 մէթր հեռաւորութեամբ,
մեքենաներէն մէկը խանգարուելու պարագա-
յին միւսները զայն պիտի կրնան կրել մինչեւ
որ ապահով տեղ մը իջեցնեն զայն:

Օգանաւաշարներ կազմելով երթեւեկու-
թիւնը պիտի ածաննայ եւ կը հաւատամ թէ
շոգեկառքէն աւելի ապահով եւ արագ պիտի ըլ-
լայ:

Թարգմ. Յ. Ե. Գ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԵՂԱՅՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Պօղոս Առաքեալ, Ա. Կորնթ. ԺԳ. գլու-
խը սիրոյ յատկացնելով շատ գեղեցիկ կեր-
պով բացատրած է թէ ի՞նչ է սէրը: Երկու
մեծագոյն պատուիրաններէն մէկն է, «Սիրել
զԱստուած բոլոր սրտով»: Իսկ միւսը՝ «Սիրել
զընկեր անձիդ պէս»: Մատ. 22-39: Աս-
տուած սէր է. ուստի այն որ ճշմարիտ ու
հարազատ սէր ունի, Աստուած անոր մէջն է.
ինքն ալ Աստուծոյ մէջը. Ա. Յովհ. 4-16:
Աստուծոյ սէրը բարիներու եւ արդարներու
համար անհուն է, մեղաւորաց համար ան-
սահման ողորմութիւն է: Սէր չունեցողը նոր
ստեղծուած չէ՝: Ծշմարիտ եւ անկեղծ սէրը
սիրոյ տաճարներուն ամենասուրբն է: «Սէ-
րը չ'իյնար, մնայուն է, չի հինար, չ'ոչնչա-
նար, չափ ու կշիռ չ'ունի, սէրը կատարումն
ու լրումն օրինաց» է. Մատ. 22-28, Հոովմ. 13.
8-10: Սէրը տալ է, ո՛չ թէ առնել. ներ-
գործական է, ո՛չ թէ կրաւորական: Ծշմա-
րիտ սէրը միշտ անսպառելի է, որչափ տաս
չհատնիր: Աշխարհի վրայ գտնուող ամէն ինչ
ստուերի պէս կ'անցնի. թագաւորներ, միլի-
օնատէրներ գացած են. երկինքի բազմաթիւ

լուսաւորները պիտի խաւարին, նոր երկիրու
երկինք պիտի ըլլան. բայց սէրը ամենօրեայ
բացուող ծաղիկի պէս նոր եւ յաւիտենական
կը մնայ: Կարծր ժայռերէ բաղկացած լեռնե-
րուն հիմերէն աւելի հաստատուն է. խաւարի
լուսոյ առջեւէն փախածին պէս, ամէն ինչ
սիրոյ առջեւէն կը փախչի: Ուստի ի՞նչ է
արժէքը սրտի մը առանց ճշմարիտ սիրոյ,
հոյակապ ապարանքի մը՝ առանց բնակչու-
թեան, գեղեցիկ տաճարի մը՝ առանց կանգե-
ղի, ոսկի վանդակի մը՝ առանց սոխակի, եւ
բարձր ծառի մը՝ առանց պտուղի:

Երկնային Սէրը ի՞նչ կ'ընէ: Եղբայրը իր
անձին պէս կը սիրէ, ո՛չ թէ լոկ խօսքով ու
լեզուով հապա գործքով ու ճշմարտութիւնով:
Ա. Յովհ. 3. 18: Եղբայրները այսպէս սիրո-
ղը մահէն կեանքի փոխադրուած է. Ա. Յովհ.
3. 14: Եղբայրները սիրելու ենք ինչպէս որ
Աստուած եւ Յիսուս մեզ սիրեցին. Յովհ. 15.
12, 10. 15: Թէ որ մէկը եւս զԱստուած կը
սիրեմ կ'ըսէ եւ եղբայրը կ'ատէ, ստախոս է,
Ա. Յովհ. 4. 20, 21: Երուսաղեմէն Երիքով իջ-
նող մարդը աւազակները մերկացուցին, զայն
վերաւորեալ եւ կիսամիտ թողելով զացին,
Քահանայ մը եւ Ղեւտացի մը տեսան զայն
բայց անդիլ կողմէն գացին: Բայց Սաժա-
րացի մը անոր վրայ խղճաց, վերքերուն վրայ
ձէթ եւ զինի թափելով փաթթեց, պանդոկ
տանելով պէտք եղած ծախքերը ըրաւ. Ղուկ.
12. 30-39: Եթէ այն ժամանակ քահանային
եւ Ղեւտացիին հաբցուէր թէ զԱստուած կը
սիրէ՞ք, «այո» պիտի ըսէին, բայց սուտ խօ-
սած պիտի ըլլային: Ծշմարիտ սէրը կը սի-
րէ ամէն մարդ: Քրիստոնէաւոյնի սիրով
պէտք է սիրենք ո՛չ թէ միայն նոյն ծնողքէ
ծնածները, այլ նաեւ ուրիշները, ո՛չ թէ մի-
այն բարիները՝ իբրեւ հոգեւոր եղբայրներ, այլ
նաեւ չարերը: Միայն բարեկամները սիրելը
սահմանափակ սէր է, թշնամիներն ալ սի-
րելու ենք, քանզի Յիսուս այդպէս ըրաւ:

Սէրը միշտ զոհողութիւն ընելու պատ-
րաստ է: Սէրը տառապանք է. Յիսուս մեր
փրկիչը սիրոյ համար ամէն տեսակ տառա-
պանք կրեց: Բոլոր տառապանքներուն հի-
մը անհուն սէրն է: Ծշմարիտ սէրը փրկու-
թիւն ու կեանք է: Ծշմարիտ սէրը ամէն
զարու մէջ, եկեղեցեաց, ազգաց, ընտանեաց
կեանքը եղած է: Եթէ կ'ուզես զառնպահած

կեանքիդ մէջ քաղցրութիւն գտնել սիրել: Պիւթիաս և Թէման մտերիմ բարեկամներ էին: Թէման նախանձի ու ատելութեան պատճառաւ մահուան դատապարտուեցաւ, բայց Պիւթիասի երաշխաւորութեամբ տուն գնաց, մնաք բարեաւ ըսելու: Պայմանաժամը լմնացաւ և ան չեկաւ: Երաշխաւորը կախաղանին քովը տարին, չուանը վիզին անցնելու ատեն Թէման եկաւ: Հիմա չուանը իրարու ձեռքէն կը քաշկոտեն. օձիքներն կը պատուեն Ահա ճշմարիտ սիրոյ պտուղը: Այս տեսարանը ամբողջ բազմութիւնը զարմացուց և երկուքն ալ ազատ արձակուեցան:

Սէրը մեղաց բազմութիւնը կը ծածկէ. Ա. Պետ. 4. 8: Պահակ զինուոր մը քնացաւ, երբ արթնցաւ, գորապետի զխարկով մէկը ահաւ ճանչցաւ զայն, նափռէն էր: Կայսրը փոխանակ զայն մահուան դատապարտելու, անոր սխալը իր վերարկուովը ծածկեց: Եղբայրասիրութիւնը եղբօր յանցանքները չի մեծցներ, չի բամբասեր այլ կը ներէ, կը ծածկէ, զթով կը խրատէ: «Երկինքը սիրոյ աշխարհ, և գոթքը ատելութեան աշխարհն է» ըստւած է: Ատելութիւնը սիրոյ չգոյութիւնն է, մարդասպանութիւնն է: Այն որ իր եղբայրները կը սիրէ անոնց համար կը խորհի. կ'աղօթէ, անոնց փրկութեանը համար կաշխատի. իսկ եթէ այդ մեղաւորներուն հանդէպ անտարբեր կը գտնուի մարդասպան կ'ըլլայ. այս կը նշանակէ թէ զանոնք չի սիրեր:

Ո՛վ Քրիստոսեայ եկեղեցիներ, արթնցէք լաւ կրթիցէք ապագայ սերունդը. Աստուծոյ կամքը, Անոր սուրբ պատուիրանքները թէ՛ խօսքով և թէ՛ գործքով քարոզեցէք, չ'ըլլայ որ անմահ հոգի մը ձեր միջոցաւ կորսուի: Աստուծոյ պատուիրանքը այս է որ իր ուրախոյն, Յիսուս Քրիստոսի հաւատանք և մէկըդմէկ սիրենք, զի անիկա մեզի համար մեռաւ:

Բ. ՏՕՆԻԿԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ե. Ք. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՊԻԹԻԱՍԻ ՄԷՋ
Ձանից ընկերութիւնը Պիթիասի մէջ հիմնուած է 1926, Յուլիս 26ին, Պատ. Յ. Կիւրլէքեանի նախաձեռնութեամբը: Այդ թուականէն ի վեր ընկերութիւնն զգալի յառաջդիմութիւն ցոյց տուած է, հակառակ կարգ

մը վտանգներու, որոնք նոյնիսկ անոր գոյութիւնը վտանգի տակ դրին: Անդամներուն յամառ ջանքերովը և Աստուծոյ օգնութեամբը ընկերութիւնն հաստատ քայլերով իր ճամբան շարունակեց: Ընկերութիւնն հիմնուելէն քիչ վերջը իր առաջին դրամական նուէրը տուաւ ի նպաստ տեղիս նորակառոյց շէնքին. այս գեղեցիկ ժեարք ընկերութիւնը սիրելի գարձուց հասարակութեան: Այս գրնահատումէն քաջալերուած՝ անդամները մէյ մէկ օր իբր բանուոր ձրիօրէն աշխատեցան նոյն շէնքին մէջ: Ընկերութիւնն իր ծառայութիւնը չխնայեց թէ դպրոցի և թէ եկեղեցիի համար. ան քանիցս տուած է յաջող ներկայացումներ, որոնց հասոյթը յատկացուցած է եկեղեցիին պէտքերուն համար:

Ընկերութեան ծառայութիւնը չէ սահմանափակուած միայն ներթափէս օգնելու մէջ: Ան յաջողած է երիտասարդներուն մէջ կրօնական արթնութիւն մը յառաջ բերել, եկեղեցիին հանդէպ աւելի շահաքրքրութիւն արթնցնել, քրիստոնէական զաղափարականը անոնց ներշնչելով:

Ե. ՖԻԼԵԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ ՀԱՆԴԵՍԸ

Դպրոցական տարեշրջանը լրանալու մօտ է, ամառները հանդէսներ սկսած են արդէն ծայր տալ: Ուսումնասիրաց ընկերութիւնը կը պահէ 500 աշակերտանոց դպրոց մը, որուն Մանկապարտէզի բաժինը իր ամառները հանգէսը տուաւ Յունիս ճին. իր մասնաւոր շէնքին մէջ: Ուրախալի էր տեսնել թէ երգերու և արտասանութիւններու ներթերը ընդհանրապէս կենդանական և մանկական աշխարհէն քաղուած էին. այս մասին մէջ ընդհանրապէս յաջող էին պատիկները, բայց այնչափ յաջող չէին երբ անոնք կը փորձէին շափահատներու կեանքը և մտածումները վերաբերողը «Իմաստուն խօսքեր» ի և մասամբ «Մկոյի Տասնոցը» ի մէջ: Բայց մասնաւոր յիշատակութեան արժանի են մարդանքները, որոնք շատ յաջող անցան, և զորոնք վարելու մէջ Արմէնուհի Եագուպեան, մանկապարտէզի սանիւրէն մէկը, մասնաւոր շնորհք, ոյժ և ճարպիկութիւն ցուցուց 16 ընթացաւարտներ ստացան վկայականներ:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԻՆԱԿԸ

«ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ»

«Նոր Աւետարներ» մեր ընտանեկան ցածակ յարկին ներքե իր անակնկալ այցովը մեզի յիշել կուտայ վաղեմի բարեկամնիս՝ «Աւետարներ»ը: Իրապէս ուրախալի եւ բարեպատեհ պարագայ մըն է որ նոյն ուղղութեամբ ան կը խոստանայ իր երկշաբաթեայ այցը:

«Նոր Աւետարներ» վսիմ պաշտօնը ստանձնած է Աստուծոյ Սուրբ խօսքին բուրաստունէն յաւիտենական կեանքի ու ճշմարտութեան փունջը գնելու մեր խոցեալ հոգիներուն անարին մօտ: Ուրախ ենք տեսնելով թէ անոր էջերը վարդապետի յայտնի նշաններ կը ցուցնեն:

Հայ ժողովուրդը ներկայիս կաշկանդուած է մոլորութիւններով եւ մոլութիւններով, ծընունդը տարագրութեան ստորնացուցիչ պայմաններուն: Անոնք հիւժախտի մը նման այսօր կը ջլատեն Հայուն բարձր նկարագիրն ու հաւատքը, կը մարեն անոր Քրիստոնէական վառ եռանդը՝ մղելով զայն դէպի անկրօնութեան մահաբոյր վիճը, անոնք կը միտին զնելու վերջակէտ մը իր սուրբ կրօնքին, իր պապենական թանկագին ժառանգութեան, որուն համար այնքան զոհեր տուած է դարերէ ի վեր: Եւ ահա, Հայ ժողովուրդը, իր այս տագնապալի օրերուն մէջ, չի կարօտիր լաւագոյն բանի մը քան իրեն կարեկցող բարեկամին, որ զինքը այցելէր իր տախտակներէ ու թիթեղներէ շինուած խեղճուկ հիւղակին ներքեւ, եւ պարզ ու գիւրահասկնալի բարբառով խօսէր իր սրտին՝ կատարելով Բարի Սամարացիին դերը:

Արդ, շնորհաւորելի է որ Սուրբոյ եւ Լիբանանի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութիւնը իր իմաստուն որոշումին համեմատ, այնքան մատչելի բաժնեկիւնով մը սկսած է հրատարակել այս թերթը, որ արժանի է մեր կարողութեան սահմանին մէջ նիւթական եւ բարոյական ամէն աջակցութեան:

Հ. Յ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ուրախութեամբ կը յայտնենք թէ յարգելի յօդուածագիրը երեք անձերու մէկ տարուան «Նոր Աւետարներ» նուիրած եւ հինգ բաժանորդներ ապահոված է:

Ն. Ա.

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՄԱՅԱՐԱՑԵՑԻ ՅՈՒԴԱՅԻ ՔԱՋ ԵՂԱՅՐԵՐԸ

Այս անհաւատար կռուին մէջ մէկ կողմը կը կենային փոքր խումբ մը՝ որ հաւատարիմ իրենց օրէնքին պատրաստ էին ցմահ մաքառիլ անոր հակառակորդներուն հետ. իսկ միւս կողմը Հռովմէական ահագին ոյժ, զինուորական խիստ կարգ ու սարք, իրենց հտին պատրաստ պահեստի ահագին բանակ մը:

Աստուածավախ խումբը՝ երբ պատեհ առիթը գտնէր՝ իր պատսպարանը կողոպտեալ լեռներէն վար կ'իջնէին, գիւղերը կը մտնէին աստուածավախ Հրեաները կը քաջալիրէին, անոնց օգնելու խոստումներ կ'ընէին, կուռքերն ու անոնց սեղանները կը կործանէին եւ ապա նորէն իրենց լեռները կը քաշուէին, ուր իրենց թշնամիները չէին կրնար ելլել: Այսպէս օրերը կ'անցնէին: Մատաթիաս ձերունին այլեւս չկրնալով հանդուրժել այս լեռնային խտտակեաց կեանքի դժուարութիւններուն՝ շուտով իր մահկանացուն կընքեց: Մեռնելէ առաջ ան իր հաւատարիմ խումբը իրեն կանչելով ըսաւ անոնց. «Օրէնքին նախանձախնդիր եղէք, ու ձեր կեանքը ձեր հայրերուն ուխտին նուիրեցէք», անոնց լիւհցուց թէ ինչպէս իրենց քաջ նախնիքը չարին դիմադրած էին, եւ թէ Աստուած ինչպէս վերջին ժամուն անոնց օգնութեան հասած էր: Ան իր Յուդա որդին իրեն յաջորդ ընտրեց որպէս զի անիկա կռուի առաջնորդ ու զօրավարն ըլլայ ու Սիմոն ալ՝ իբր ամենէն իմաստունը՝ անոր խորհրդատու կարգեց: Ու զանոնք օրհնելէ վերջ մեռաւ, ու իր մարմինը իր հայրերուն գերեզմանին մէջ թաղեցին:

Յուդա շատ քաջ մարդ մըն էր. ան իրեն հետ կուող մարդոց շատութենէն ամենեւին չէր վախնար. իր կողմը միայն վեց հազար մարդ ունէր, իբր Յոյն Կառավարիչը Ափօլօնիոս իրեն հետ կռիւի սկսաւ: Հրեաները հոս իրենց առաջին յաղթութիւնը չահեցան՝ երբ Յուդա Ափօլօնիոսը մեռցուց, անոր սուրը տոռաւ, եւ անկէ հտքի պատերազմներու մէջ այդ միւսնոյն սուրով կռուեցաւ:

Այնուհետեւ Սէրոն անուն հրամանատար մը եկաւ՝ Սուրբոյ թագաւորին դէմ պատամրոզ այս փոքր խումբը բռնելու հա-

մար։ Այս երկրորդ պատերազմին տեղը ճիշդ այն տեղն էր՝ ուր Յեսու ատենօք կռուած էր Ամորհացւոյ թագաւորին հետ ու յաղթած անոր ահագին բանակներուն։ Այս անգամ եւս Աստուած օգնեց, եւ Յուդա իր երկրորդ փառաւոր յաղթանակը շահեցաւ։

Խնդիրը տակաւ ծանր կերպարանք կ'առնէր։ Սակայն Անտիոքոս թագաւորը անձամբ չէր կրնար երթալ, նուաճել Յուդան՝ քանի որ ճիշդ նոյն ատեն լուր հասած էր թէ Հայերն ու Պարսիկները կը մերժէին իրենց առերբը վճարել իրեն։ ու ինք ստիպուած էր անոնց դէմ երթալ։ Սակայն եւ այնպէս թագաւորը 40,000 հետեւակ զինուոր ու 7000 հեծեալ յանցնեց իր հաւատարիմ Լիսիաս զօրաւորին ու զանիկա Յուդայի վրայ զրկեց։

Լիսիաս խորհելով թէ այսքան զինուորը չափազանց շատ էր, անոնց կէսը երկու զօրաւորներու յանցնեց, որոնք յարձակեցան Յուդայի մարդոց վրայ։ Իսկ մնացեալ կէսը ինք կ'առաջնորդէր։ Խեղճ Հրեաները երբ ասիկայ լսեցին՝ բոլորովին յուսալքուեցան, անոնցմէ շատերը Յուդայէն բաժնուեցան, այնպէս որ Յուդայի քով միայն 3000 հոգի մնացին։ Ասոնք մեծ տրտմութեամբ կը սիսնէին ձօտեցող ահագին բանակը։ Սակայն Յուդա, այդ քաջ զօրավարը՝ երբէք չյուսահատեցաւ, այլ շուտով կազմակերպեց իր փոքրիկ բանակը ու հազիւ կռուի սկսելու վրայ էր՝ երբ լուր առաւ թէ թշնամի բանակէն 5000 հոգի, ճարպիկ հրամանատարի մը ձեռքին տակ՝ գիշերանց պիտի յարձակին ու գրաւեն իրենց բանակատեղին։ Այս լուրը

առածին պէս Յուդա գիշերանց պարպեց իր բանակատեղին՝ ու ինք իր մարդոցմով դարանամուտ եղաւ այնպիսի տեղ մը, որ թշնամիի տեսողութենէն բոլորովին ծածկուած էր։

Թշնամին տեսնելով որ Հրէից բանակեալին զիմադրութիւնը շատ տկար էր, յարձակելով դիւրաւ գրաւեց զայն, սակայն վարմանալով տեսաւ թէ հոն ոչ պաշար կար ոչ ալ զինուոր։ Եւ ի՞նչ մեծ եղաւ անոնց վարմանքը ու սարսափը, երբ իրենց ետին նայելով տեսան որ իրենց բանակատեղին Յուդայի քաջ մարդոց կողմէ գրաւուած ու կրակի տրուած էր։ Յոյն բանակը ծուղակն ինկած էր. ուրիշ ճար չկար. կը խորհէին գոնէ իրենց կեանքը ապատելու համար փախչիլ. իսկ Յուդա զանոնք հալածելով անոնց մեծ մասը ջարդեց։

Պատերազմը վերջացաւ Յոյն բանակի ու իրեն օգնութեան փութացող պահեստի զօրքերու պարտութեամբը։ Այդ օրը պատերազմի զաշտին վրայ 9000 սպանեալներ կային. մնացեալները հազիւ հազ կրցան փախչիլ եւ իրենց կեանքերն ապատել։

Իսկ Յուդա, իր ստացած խոշոր աւարը բաժնեց նախ որբեւայրիներուն եւ աղքատներուն, եւ մնացեալներն ալ իր զինուորներուն։

Ու հետեւեալ օրը չաբաթ ըլլալով, ինք ու իր զինուորները հանգստացան Տէրոջը պատուէրին համեմատ։ Այդ տարին խաղաղ անցաւ՝ որովհետեւ այս մեծ պարտութենէն վերջ՝ թշնամին չուզեց աւելի արիւն թափել։

(Շարունակելի)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սա մեր երիտասարդները

Տ. Ճ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ՝

Կոմիք Կ'ուսուցուի՞ր ՊԱՏ. Յ. ԿԻՒՐԼԷՔԵԱՆ

Հանստոս Պասմուքիւն Հայկայի Հայ Աւես.

Եկեղեցիի ՎԵՐ. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Վարդաւան Դիւսերը ԹԱՐԳՄ. Յ. Ե. Գ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Եղբայրապիտոքիւն ՎԵՐ. Բ. ՏՕՆԻԿԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՍԻՒՆԱԿ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կրօնարարոյական, Դիտական, Կրթական երկչաբաթաթերթ։

Արտօնատէր, ՎԵՐ. Կ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ
Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. ԽՐԺԵԱՆ

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիւ

Արտասահման » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER

BOITE POSTALE 287

ALEP SYRIE